

# ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

## ՆՈՐԱԿՈՉԻԿՆԵՐԻ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՐՄԱՐՎԵԼՈՒ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՊԱԽԱՆԱՑԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### ՄԵԼՍ ՄԿՐՏՈՒՄՅԱՆ

Ժամանակակից բանակը յուրաքանչյուր երկրի խաղաղ գոյատևման, նրա սոցիալ-տնտեսական զարգացումների հիմնական պատվարն է: Քսաներորդ դարի վերջերին աշխարհում տեղի ունեցած սոցիալ-քաղաքական բուռն զարգացումները ցույց տվեցին, որ ժողովուրդների հնքնուրույնության, պետականության պահպանման երաշխիքը մարտական բարձր պատրաստվածություն ունեցող բանակն է: Ժամանակակից նարտահրավերներին դիմակայելու, երկրի քաղաքացիների խաղաղ ապրելակերպը պահպանելու համար բանակին անհրաժեշտ է նարտարվեստի գաղտնիքներին տիրապետող զինվորական անձնակազմ: Անշուշտ, բանակի նասին կարծիքներն ու բնութագրերը ձևավորվում են այնտեղ ծառայող շարքային ու սպայական անձնակազմի ռազմաքաղաքական ու մասնագիտական բազմակողմանի պատրաստվածությամբ: Այս առումով առանձնակի կարևորություն են ստանում բանակի ավանդույթները, հաղթանակները, սերունդներին փոխանցվող լավագույն սովորույթները, ժամանակի նարտահրավերներին դիմակայելու հնարավորություններն ու փորձը:

Բանակային ծառայությունը ռիսկի ու վտանգներով լի արտակարգ իրավիճակների բարդ բնագավառ է: Այստեղ տեղի ունեցող դեպքերի սրբնաց զարգացումները, ֆիզիկական ու հոգեբանական լարված իրավիճակներն ու դրանց հաղթահարմանն ուղղված ջանքերը հաճախ հասնում են մարդկային հնարավորությունների սահմանաեզրին: Մասնագիտական գրականության մեջ այդպիսի բնութագրեր ունեցող գործունեության բնագավառները դասվում են արտակարգ իրավիճակների շարքը<sup>1</sup>:

Ժամանակակից բանակին ու նրա կենսագրությանը վերաբերող աշխատությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ նարտական գործողությունների հաջողությունները պայմանավորված են ոչ միայն ժամանակակից մարտական տեխնիկայի և առաջավոր տեխնոլոգիաների առկայությամբ, այլև անձնակազմի մասնագիտական, ֆիզիկական և մտավոր պատրաստվածության մակարդակով:

Մարտարվեստի ժամանակակից տեսական և գործնական գիտելիքների յուրացումը բանակի անձնակազմից պահանջում է առանձնահատուկ պատրաստվածություն, օրգանիզմի ընդհանուր և հոգեկան աշխատունակություն, հուսալիություն, անբարենպաստ հոգեվիճակների հնքնակարգավորման բարձր հնարավորություններ: Այս առումով զինվորական ծառայությունը իր արտակարգ իրավիճակների բնութագրերով ֆիզիկական և հոգե-

<sup>1</sup> Տե՛ս Մալկինա-Պյոխ Ի. Գ. Էկстремальные ситуации. М., 2005, էջ 405:

բանական հատուկ պատրաստվածության պահանջներ է առաջադրում ինչպես սպայական, այնպես էլ շարքային անձնակազմին: Զինվորական պատրաստությունը բարդ ու երկարատև ֆիզիկական, մասնագիտական, տեխնիկական և սուսական խնդիրների լուծմանը միտված գործընթաց է, որտեղ, կարծում ենք, հոգեբանական պատրաստության բաղադրանարկ կարևորագույններից մեկն է, քանի որ ժամանակակից պատերազմներում լայնորեն կիրառվում են հոգեբանական ազդեզրության հզոր միջոցներ<sup>2</sup>:

Հոգեբանական պատրաստությունը շարունակական անվերջ գործընթաց է, և ժամանակի պահանջներին համապատասխան փոխվում է միայն նրա բովանդակությունը: Այդ իսկ պատճառով բանակում ծառայող անձնակազմի ընդհանուր և հոգեբանական պատրաստությունը պետք է սկսել դեռևս քաղաքացիական կյանքից: Ընտանիքում, դպրոցում, բուհերում և աշխատանքային կոլեկտիվներում իրականացվող կրթության, դաստիարակության և նաև ազգիտական գիտելիքների փոխանցման գործընթացին զուգահեռ պետք է տրվեն նաև բանակում ծառայելուն անհրաժեշտ ունակություններ և հնտություններ: Զինվորների սահուն և բարեհաջող ներգրավումը բանակային միջավայր և այնտեղ հարմարվելու գործընթացի ապահովումը պահանջում են նշված օղակների աշխատությունը և հետևողական վերաբերմունքը այդ կարևոր գործի նկատմամբ: Կարծում ենք, որ ՀՀ դպրոցներում բանակային պատրաստությունը բավական ուշացած գործընթաց է: Ժամանակակից համաշխարհային ռազմաքաղաքական գրգացումներում որպես օրինաչափություն հաշվի են նստում այն երկրի, ժողովրդի հետ, ով գորեղ, մարտունակ բանակ ունի, ով հնարավորինս ավելի արդյունավետորեն է կարողանում օգտագործել իր երկրի մարդկային, նյութական, քաղաքական ու ռազմական ներուժը:

Մեր Երկրում բանակը համալրվում է 18-28 տարեկան պատասխաներով և երիտասարդներով։ Բազմաթիվ հետազոտություններ հաստատում են այն փաստը, որ բանակ զորակոչվող երիտասարդներից շատերը դեռևս չունեն ինքնուրույն ապրելու բավարար փորձ, անհրաժեշտ ֆիզիկական պատրաստվածություն, ներխնճային բարդ փոխհարաբերություններում արագ հարմարվելու կարողություններ, դժվար իրավիճակներում ճիշտ կողմնորոշմենու հնտություններ<sup>3</sup>։

Գաղտնիք չեն նաև, որ բանակում հաճախ հայտնվում են թույլ դրդապատճառային համակարգություն, ֆիզիկական և հոգեբանական վատ պատրաստվածություն ունեցող գինակոչիկներ, որոնք երբեմն նույնիսկ մինչև ծառայության ավարտը այդպես էլ չեն կարողանում հարմարվել բանակային պայմաններին: Մեր կատարած հետազոտությունների արդյունքները ցույց են տալիս, որ այդպիսի գինվորների համար վերադասի հրամանները երբեմն ընկալվում են որպես ավատիժ կամ հրամանատարի սուբյեկտիվ վերաբերմունք, որից անհիմն կերպով ջանում են խուսափել կամ դժկանությամբ են կատարում: Այդպիսի դեպքերում նրանք փնտրում են ամեն տե-

<sup>2</sup> Стру Средин Г. В., Волкогонов Д. А. Человек в современной войне. М., 1981, № 221:

<sup>3</sup> Стю Закарин Г. А., Мелик-Пашаян А. Э. К вопросу о клинико-психологической диагностике призываников // «Դաշտանի առաջին միջազգային թժկական հանրապետական հույսի փորձագործություն» Եղ., 2003, էջ 133.

սակ միջոցներ և հնարքներ՝ իրենց վարքագիծը արդարացնելու համար: Այս երևույթը առիթ է դաշնում ոչ կանոնադրային փոխարաբերությունների ձևավորման, ինչպես նաև լուսանցքային (մարգինալ) խմբերի առաջացման (ապարանցիներ, սյունեցիներ, գավառցիներ, լոռեցիներ և այլն): Փորձը ցույց է տալիս, որ եթե այդպիսի խմբերի նկատմամբ ժամանակին համապատասխան հոգեբանական աշխատանքներ չեն տարվում, ապա դրանցում ձևավորվում են ոչ պաշտոնական հեղինակություններ, լիդերներ, որոնք հաճախակի հրահրում են բախումներ և զանազան անախորժ միջադեպեր: Այդպիսի խմբերում հայտնված կարգապահ, պարկեշտ նորակոչիկները, ոքուս չունենալով ներխսմբային փոխարաբերություններում ինքնադրսնորման, համագործակցության համապատասխան հմտություններ, դժվարությունների հաղթահարման ինքնուրույնություն, ավելի կարողունակ մրցակիցների կողմից հետ են մղվում՝ դաշնալով «երկրորդ կարգի խաղացողներ»: Որպես կանոն՝ նրանք կոլեկտիվում իրենց զգում են անապահով, մեկուսացած, խորթ ու անպաշտպան: Այդպիսի «անպաշտպան զինվորների առկայության պայմաններում վտանգվում է ոչ միայն խմբի, ջոկի մարտական առաջադրանքների կատարման հեռանկարը, այլ նաև բանակի ընդհանուր կարգապահությունն ու մարտունակությունը»<sup>4</sup>:

Բանակային ծառայության ընթացքում օրեցօր աճում են զինվորների առջև դրված պարտականություններն ու դրանց կատարման հետ կապված հոգեբանական ու ֆիզիկական դժվարությունները: Սակայն հասկանալի պատճառով այդ հանգանանքը ոչ ոքի չի ազատում իր առջև դրված պարտականությունների կատարման պատասխանատվությունից: Բանակում գոյություն ունեցող յուրաքանչյուր միավոր ունի իր կոնկրետ անելիքներն ու պարտականությունները: Երբեմն ժամանակի սղության, կրտսեր սպայական անձնակազմի ոչ լիարժեք մասնագիտական ու մանկավարժահոգեբանական պատրաստության ցածր մակարդակի պատճառով զինվորներից պահանջվում է այն, ինչին վերջիններս պատրաստ չեն: Սա չի նշանակում, թե սպաները չպետք է զինվորներից պահանջեն այն, ինչ ժամանակին սովորեցրել են: Պարզապես երբեմն շարքային անձնակազմի ծառայության դրդապատճառների բացակայությունն ու ընդհանուր ֆիզիկական պատրաստվածության ցածր մակարդակը թույլ չեն տալիս նրանց լիարժեք իրականացնելու իրենց վրա դրված ծառայողական պարտականությունները: Բանակը զարգացող օրգանիզմ է: Այստեղ ներդրվում են պատրաստության նորագույն տեխնոլոգիաներ, որոնք թույլ են տալիս ավելի արդյունավետ իրականացնելու զինվորի սահուն ներգրավումը զինվորական կոլեկտիվի մեջ: Ժամանակակից բանակը տվյալ երկրի գիտատեխնիկական, տնտեսական զարգացածության մակարդակը կրող և դրանք ըստ արժանվույն պահպանող կարևոր կառույց է: Ժամանակակից բանակին անհրաժեշտ են խելացի, ֆիզիկապես ուժեղ ու կոփված երիտասարդներ, որոնք կարծ ժամանակամիջոցում կարող են և պետք է հարմարվեն բանակային դժվար կյանքին, արագ յուրացնեն զինվորի մասնագիտության դժվարին և վտանգավոր արվեստը: Յոգեբանական առումով

<sup>4</sup> Մ. Պ. Սկրտումյան, Կրտակարգ իրավիճակների հոգեբանության կանխարգելման և վերականգնողական հիմնախնդիրները, Եր., 2008, էջ 102:

ծառայությունը սկսվում է գորակոչից, զինվորական կոլեկտիվում ներգրավվելու (սոցիալականացման) և դրանում ակտիվորեն հարմարվելու գործընթացից<sup>5</sup>:

Սոցիալականացման և հարմարման գործընթացը բարդ հոգեբանական, կենսաբանական, սոցիալական գործընթացների ամբողջություն է, որն իրականացվում է մանկավարժահոգեբանական ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ: Սոցիալականացման և հարմարման գործընթացում իրենց կարևոր դերն ունեն սպայական անձնակազմը, ինչպես նաև կոլեկտիվի մյուս անդամները իրենց ընկերական, բարյացական վերաբերմունքով ու բազմակողմանի օգնություն ցուցաբերելու պատրաստակամությամբ: Կոլեկտիվում բարյացակամ վերաբերմունքի բացակայության պայմաններում նվազում են փոխադարձ համագործակցության արդյունավետության ցուցանիշները: Այսպիսի դեպքերուն սովորաբար ամենաթույլ օղակը նորակոչիկների խումբն է, որ ականա հայտնվում է իր համար խորթ, իսկ երեմն էլ՝ թշնամական միջավայրում<sup>6</sup>:

Առանց այդ էլ վախվորած ու ծառայության նասին բազմաթիվ իրարամերժ ու չափազանցված պատճություններ լսած նորակոչիկի համար սկսվում է ծանր փորձություններով հագեցած մի ժամանակաշրջան, որը թույլ չի տալիս նրան լիարժեքորեն ներգրավվելու ծառայողական պարտականությունների մեջ: Նա դառնում է զգուշավոր, զգայուն, միևնույն ժամանակ բանակային կյանքին վերաբերող ամեն ինչի նկատմամբ թերահավատ: Թշնամանքով է լցվում սպայական անձնակազմի ու մյուսների նկատմամբ: Նա մերժում է ամեն ինչ, ինչը կապված է բանակային կյանքի հետ: Կորված լինելով իրական կյանքից ու ընկերների հետ շփվելու հնարավորությունից՝ նա աստիճանաբար դառնում է մելամաղձուտ, ապրում քաղաքացիական կյանքի անցած հուշերով: Ցերեկները քիչ թե շատ զինվորական պարտականությունների մեջ ներգրավված լինելու պատճառով ծառայության որոշ դժվարություններ նորացության են տրվում: Սակայն գիշերը սկսվում է մի ուրիշ իրականություն: Դա նրա կարուտի, երազների աշխարհն է, քաղաքացիական անհոգ կյանքը, ինչը նրան մինչև լուս պահում է անքնության, մղձավանջների ու հիշողությունների մեջ՝ հնարավորություն չտալով վերականգնվելու օրվա ծանրաբեռնվածությունից ու լարվածությունից հետո: Այսպիսի ապրելակերպը շուտով առաջացնում է հոգնածություն, քրոնիկ անքնություն, գերհոգնածություն, մարսողական, սիրտ-անոթային, հենաշարժական և այլ համակարգերի գործառության խանգարումներ: Իջնում է նրա ընդհանուր դիմադրողականությունը, փակվում է ախորժակը, նկատվում է քաշի կտրուկ անկում, ընդհանուր հյուծվածություն: Այս ամենը, բնականաբար, անդրադաշնում է նրա վարքագի, շփման, հաղորդակցման, խմբի անդամների հետ համագործակցելու գործընթացների արդյունավետության վրա: Դեռ ավելին, այս ամենը անդրադաշնում է նաև նորակոչիկի հոգեկան ոլորտի գործառության հնարավորությունների վրա<sup>7</sup>:

<sup>5</sup> Ст. МАКЛАКОВА А. Г. Военная психология. СПб., 2007, № 264:

<sup>6</sup> Ст. ГРИШИНА Н. В. Психология конфликта. СПб., 2000, № 37:

<sup>7</sup> Ст. Յ. ՍԵԼԵ, Սրբեա առանց դիսրեսի, Եր., 1983, № 138:

Նա ամեն ինչում դրսկորում է ալարկոտություն, անտարբերություն, հրամանների ընկալման ու կատարման դանդաղկոտություն, ինքնուրույնության ու նախաձեռնության բացակայություն: Անեն ինչում նա իրեն զգում է ավելորդ, հաճախակի վեծի ու հակամարտությունների մեջ է հայտնվում՝ դրանով ազդելով ընդհանուր կարգապահության վրա: Որպես կանոն՝ նա իրեն հեռու է պահում կոլեկտիվ միջոցառումներից, երբեք չի ցուցաբերում որևէ նախաձեռնություն անգամ պարզ հարաբերություններում: Այսպիսի գինվորը սպայի համար բեռ է, հատկապես եթե նա տրամադրված չէ գինվորի հետ անհատական աշխատանքներ տանելու: Այսպիսի վերաբերմունքը սպային հնարավորություն չի տալիս բացահայտելու նորակոչչիկի թաքնված հնարավորությունները: Դետևանքը լինում է այն, որ նրանց միջև առաջանում է փոխադարձ անհանդուրժողականության ու թշնամանքի տրամադրվածություն, որը շատ շուտով վերածվում է հակամարտության՝ իր բոլոր անցանկալի հետևանքներով: Այդ իսկ պատճառով չափազանց կարևոր է ընկերական, բարեկամական փոխհարաբերությունների առկայությունը, որը նպաստավոր պայման է հատկապես նորակոչչիկների հոգեբանական հարմարման կարևոր գործում:

Հոգեբանական հարմարումը օրգանիզմի հոգեֆիզիոգիական տարբեր համակարգերի գործառության նպատակահարմար փոփոխության գործընթացն է՝ առկա պայմանների պահանջներին համապատասխան<sup>8</sup>:

Հոգեֆիզիոլոգիական այս բարդ գործընթացի կառավարումը պահանջում է անձի անհատական առանձնահատկությունների, ծառայության ընթացքում ձևակորպող արժեքների գնահատման և ճիշտ մեկնաբանման ունակություն: Այստեղ շատ կարևորվում է նորակոչչիկների քաղաքացիական կյանքի փորձը նրբանկատորեն, մասնագիտորեն հաշվի առնելը, ինչպիսին էլ որ այն լինի: Հարմարման գործընթացը իրականացնելիս կարևոր է գինվորի ապրած կյանքի և ներկա ժամանակների միջև կապի ստեղծումը: Անցյալից խիստ կախվածություն ունեցող նորակոչչիկներին պետք է ազատել ծառայության գործընթացին խանգարող բոլոր տեսակի ապրումներից, հիշողություններից ու տպավորություններից: Բանակային կյանքին չհարմարված գինակոչչիկը, օբյեկտիվորեն ապրելով ներկա ժամանակաշրջանում, հաճախ իր ապահովությունն ու հանգիստը գտնում է իր հուշերում: Այդ է պատճառը, որ նա գրեթե միշտ ակամա տեղափոխվում է իր համար անհոգ ու ապահով ժամանակները: Այսպիսի դեպքերում գինվորը ապրում է իր իսկ հորինած աշխարհում՝ իր բարեկամների, սիրած աղջկա ու ընկերների հետ կապված հիշողություններով ու դրանց շուրջ կառուցած երևակայական պատկերներով: Ուստի շատ կարևոր է հոգեբանի, սպայի կողմից բացահայտել այն հանգամանքը, թե տվյալ պահին գինվորը հոգեբանորեն ո՞ր ժամանակահատվածում է գտնվում (անցյալու՞ն, ներկայու՞ն, թե՞ ապագայում):



<sup>8</sup> Стін Гримак Л. П. Резервы человеческой психики. М., 1989, тж 76:

Որքան շուտ է զինվորը սկսում ապրել բանակային կյանքով, այնքան արագ է կարողանում անցնել իր պարտականություններին: Զինվորական կյանքը դիմանիկ, արագ զարգացումներով ու փոփոխություններով բարդ ապրելակերպ է: Այն չի կարող սպասել մինչև զինվորները իրենց ցանկությամբ հարմարվեն (առավել ևս, երբ այդ ցանկությունը հաճախ բացակայում է): Հետևաբար խիստ կարևոր է ռազմական հոգեբանի, սպայի կողմից ճիշտ կառուցվող հարմարողական աշխատանքների ռազմավարության ընտրությունը: Չնայած հարմարման գործընթացում օբեկտիվորնեն գոյություն ունեցող բավականին լուրջ դժվարություններին, անուամենայնիվ մասնագետները չպետք է անտեսեն զինվորի տարիքային գործոնը (կան զինվորներ, որոնք հայտնվում են բանակում 28 տարեկան հասակում), նրա անհատական, հոգեբանական առանձնահատկություններին ու անձի ընդհանուր գարգացմանը ներկայացվող մանկավարժահոգեբանական պահանջները<sup>9</sup>:

Այստեղ է, որ հաճախ մասնագետները թույլ են տալիս շտապողականություն ու կողիտ սխալներ, որոնք ուղղակիորեն անդրադառնում են զինվորի անձի կայացման, ինքնության, նրա արժանապատվության, հայրենասիրական դրդապատճառների ու արժեքային համակարգի ձևավորման գործընթացի վրա: Զինվորների հնարավորինս սահուն, անցավագին ներգրավումը կոլեկտիվի մեջ և դրանում հարմարման գործընթացի արդյունավետ կազմակերպումը մասնագետներից պահանջում են նիշագր գործոնների հաշվառում, որոնք նաև կապահովեն զինվորների հետագա ծառայության դժվարությունների հարթահարումը: Առաջարկում ենք առանձնացնել հետևյալ երեք գործոնները:

1. Անձնային - անհատական առանձնահատկություններ, դրդապատճառ-արժեքային համակարգ, հուզականային ոլորտի առանձնահատկություններ, ընդհանուր ֆիզիկական և մտավոր զարգացածության որոշակի աստիճան, շփման, հաղորդակցման, խոսքային գործառույթներ և այլն:

2. Ընտանեկան - ծնողների հետ կառուցվող փոխհարաբերությունները, միակողմանի կամ երկկողմանի ծնողագրկությունը, ընտանիքի սոցիալ-տնտեսական, բարոյահոգեբանական բնութագիրը, նրանում առկա արժեքային համակարգը, ավանդույթները և այլն:

3. Սոցիալական - զինվորական կյանքին նորակոչիկների հարմարվածության և չհարմարվածության աստիճանը, ծառայության վերաբերյալ ունեցած գնահատականը, ստանձնած պարտավորությունների կատարման որակը, կոլեկտիվում նրա շփման, հաղորդակցման եզրերը, կարգապահության բնութագրերը և այլն:

Նորակոչիկների հնարավորինս սահուն ներգրավումը և հնարավորինս շուտ հարմարումը կոլեկտիվի մեջ ոչ միայն նրանց բանակային հետագա կյանքի բարենպաստ երաշխիք են, այլև կոլեկտիվում ոչ կանոնակարգային փոխհարաբերությունների բացառման պայման, նրանց մարտական պատրաստության ու ռազմավարական խնդիրների լուծնան կարևոր նախադրյալ: Փորձը ցույց է տալիս, որ զինվորների սոցիալականացման և հարմարման գործընթացի արդյունավետությունը պայմանավորված է սպայական և շարքային անձնակազմերի միջև գոյություն ունե-

<sup>9</sup> Στέν Κούπլενդ Η. Πsихология и солдат. М., 1991, № 76:

ցող ճիշտ և արդյունավետ համագործակցությամբ, ինչպես նաև՝ փոխընթացանամբ: Այդ գործընթացում առաջնային տեղ է գրավում սպայի զինվորական, մանկավարժական, բարոյահոգեբանական պատրաստվածության բարձր մակարդակը: Այն հնարավորություն է տալիս համագործակցության եզրեր գտնելու զինվորների հետ, և արդյունավետորեն կազմակերպելու զինվորների բանակային ծառայության գործընթացը:

Սոցիալականացման և հարմարման գործընթացների հիմքում ընկած է անձի դրդապատճառային համակարգության, հուզականային հատկանիշների, անհատական առանձնահատկությունների և այլ համակարգերի արդյունավետ համագործակցությունը: Այս առումով պակաս կարևորություն չունեն մասնագետների կողմից ծառայության մեջ գտնվող զինվորների կենսաբանական, ֆիզիկական հնարավորությունների գարգացման և կառավարման գործընթացների արդյունավետ կազմակերպումն ու վերահսկումը: Կոլեկտիվում զինվորի ակտիվ գործունեության շնորհիվ նրա մեջ ձևավորվում են իր ուժերի նկատմամբ վստահություն, կայուն ինքնագնահատական: Նա աստիճանաբար դառնում է համարձակ ու նախաձեռնող՝ իրեն համարելով կոլեկտիվի կարևորագույն մասնիկը: Ժամանակի ընթացքում նրա մեջ ձևավորվում են կայուն սկզբունքներ, աշխարհայացք, հայրենիքին ու զինվորական երդմանը հավատարին նաև լու բարձր պարտավորվածություն: Բանակային կյանքի պայմաններին զինվորների սահուն հարմարվելու համար մասնագետները պետք է իրականացնեն մի շաբթ կարևոր պահանջներ, որոնց անտեսումը հանգեցնում է լուրջ դժվարությունների, ինչպես նաև անցանկալի միջադեպերի: Դրանք են.

▪ Զինակոչային տարիքի դեռօհասների և պատանիների հետ տարվող ռազմահայրենասիրական դաստիարակության աշխատանքների իրականացում, բազմակողմանի ֆիզիկական, մասնագիտական, տեխնիկական պատրաստության ապահովում, ինչպես նաև բանակում ծառայելու հանդեպ դրական վերաբերմունքի, դիրքորոշման ձևավորում:

▪ Պատերազմի հերոսների, տաղանդավոր զորավարների, հնարամիտ զինվորների ու սպաների սխրագործությունների լուսաբանում, հայ ժողովրդի պատնության փառահեղ էջերի, թագավորների ու համաշխարհային փառք ունեցող դեմքերի կյանքի ու սխրագործությունների մասին քննարկումների, վերլուծությունների կազմակերպում, դրանց նվիրված երեկոների, ցերեկույթների, կինոդիտումների անցկացում և այլն:

▪ Նորակոչիկների շրջանում ձևավորել զինվորական մասնագիտությունների, զինվորական համագետսի ու պատվի նկատմամբ հարգանքի, արժանապատվության բարձր զգացում, իրականացնել պատանիների ու երիտասարդների մասնագիտական ընտրության գործում դեպի զինվորական մասնագիտությունները ուղղված աշխատանքներ:

▪ Բանակ զորակոչվող պատանիների շրջանում ծառայության նկատմամբ բարձր պատասխանատվության, պարտօնի զգացման, երկրի սահմանների պաշտպանության կայուն դրդապատճառների և դիրքորոշումների ձևավորում:

▪ Զինվորական կոլեկտիվներում նորակոչիկների սահուն ներգրավման, նրանց միջև հետագա համագործակցության մթնոլորտի ձևավորման

նպատակով գինվորների միջև փոխօգնության, հանդուրժողականության, բարեկանական, ընկերական հարաբերությունների ձևավորում:

▪ Սպայական անձնակազմի կողմից նորակոչիկների և իին ծառայողների միջև ամեն տեսակ խորականության բացառում, առաջադրանքների հանձնարարնան ժամանակ նորակոչիկների անհատական առանձնահատկությունների հաշվառում:

▪ Հատկապես ծառայության առաջին ամիսներին նորակոչիկների ակտիվության բարձրացման, նախաձեռնողության և նպատակային ձգությունները չարգելակելու, չճնշելու համար ամեն տեսակ լավ մտահղացման խրախուսում:

▪ Բանակային տարբեր ստորաբաժանումների և հասարակական կազմակերպությունների միջև ակտիվ կապերի, համագործակցության փոխհարաբերությունների ձևավորում, գինվորների ընտանիքի անդամների և զորամասի միջև տեղեկատվության ամուր կապի ստեղծում:

▪ Ուզմակային սարքավորումների, մարզասարքերի, ինչպես նաև մարտական գործողությունների ռազմավարական խնդիրները ներկայացնող մանրակերտների օգնությամբ զորակոչիկներին մարտարվեստի գաղտնիքներին տիրապետելու հնարավորության ընձեռում և այլն:

**МЕЛЬС МКРТУМЯН – *Психологические особенности адаптации новобранцев к военной службе.*** – В статье рассматриваются проблемы социализации и адаптации новобранцев в армейском коллективе. Автор раскрывает психологические механизмы дезадаптации личности молодых солдат, а также социальнопсихологические и моральные детерминанты, порождающие неуставные взаимоотношения между военнослужащими. Важное место уделяется начальной психологической подготовке, в ходе которой происходит социализация и адаптация новобранцев. Психологическая подготовка позволит им успешно усвоить сложную военную науку. Чтобы достичь этой цели, необходимо создать в армейском коллективе благоприятную морально-психологическую атмосферу.

**MELS MKRTUMYAN – *The Psychological Peculiarities of Recruits' Adaptation to Military Service.*** – The problems of socialization and adaptation of recruits in the army are discussed in this article. The author reveals the psychological mechanisms of the personal deadaptation of recruits as well as social-psychological, moral determinants causing non-regulative interrelation among the soldiers. The primary psychological preparation takes an important place in the process of general military training for action, during which the process of socialization and adaptation of recruits is realized. The psychological preparation is a reliable base for successful adoption of complex technologies in modern martial art. For realization of that aim, a competent organization for the formation of successful moral-psychological atmosphere is necessary in the army.